

“Վերջին ստացող սորայ Երեմիաս ծառայ Աստու-
ծոյ եւ Առաջնորդ Արքակաղնոյս”:

“Դարձեալ վերստին կազմեցաւ Աւետարանս ձե-
ռամբ Մուրատշահ անարժան ղազրի ի քաղաք Ստըմպաւ
ի ԹՎին ԶԼԸ (= 1549). յետ կազմ Պարոն Մեկիքշահ
իւր հոգւոյն եւ իւր ծնողացն համար”:

1356 եւ 1364. — Աւետարան. Թուղթի
վրայ գրուած. երկսինն նշանակելի հանդամանք-
ներէ զուրկ:

Գրիչ՝ Վարդան Աբեղայ. Թուղթ կոկողը՝
Յովնանէս սարկոսոս:

“Արդ՝ ես Աւետիս Աբեղաս եւ Վարդան Աբեղաս,
մատուցար զաստուածապատում սուրբ Աւետարանս ի
վանքս Ս. Առաքելոյն Պետրոսի եւ Պաւղոսի, որ է
յաւթուզն (?) եւ է Պարոն Աթամեկիքին շինած: Եւ
էցի մեզ յիշատակ եւ ծնաւդաց մերոց Կիրակոսին
եւ Թադնորոյն եւ եղբարց մերոց” եւ այլն:

“Գրեցաւ յիշատակի գիրս ԹՎին ՊԺԳ (= 1364)
ՅԱպրիլի ամսոյ Զ. (= 6), որ է տան Աւետեաց
Աստուածածնի”:

Մատթէոսի Աւետարանին վերջը.

“ԶՎարդան բազմակող զրիչ աղաչեմ յիշել ի
Տէր միով ողորմեաիւ. նա զսիրելի եղբայր մեր զՎաշիկ
միայնակեաց եւ զՅակոբ երէց, որք սիրով ընկալան զմեզ”:

Մարկոսի Աւետարանին վերջը.

“ԶՎարդան արեղայս՝ յիշեա՛ տեր եղբայր. ՊԳ
(= 1355):

— Վերանորոգուած՝ 1757ին, Կամարակապի մահ-
տեսի Մարիամիւ եւ իր դստեր մահտեսի Ուստիանէին
արգեամբ:

1437. — Լքուած խաչքար մը, 43×40
մեծութեամբ, որուն եզերքը գրուած յիշատակ-
արանք մաշած է եւ շատ դժուար կը կարդացուի
ամէնէն կարեւոր մասերը. Յիշատակարանը վերին
եւ հին ու ձախ եզերքները փորագրած է, վերի
եզերքին վրայ կը կարդացուի Յիշատակէ Ծարդէն: